

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ II  
ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

**- Խորհրդատվական ծառայությունների առաջադրանքի պայմանների բաժիններ -**

Նախագիծ, 2020թ. հունիս

**1. ՆԱԽԱԲԱՆ**

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող լեռնային երկիր է Հարավային Կովկասում: Երկրի մեծ մասը գտնվում է մեծ բարձրության վրա (ծովի մակարդակից ավելի քան 1000մ բարձր), ներառյալ քաղցրահամ Սևանա լիճը, որը՝ 5000 կմ<sup>2</sup> մակերեսով, զբաղեցնում է երկրի տարածքի մոտ մեկ վեցերորդ մասը: Տոպոգրաֆիական և կլիմայական տարբերությունների պատճառով առաջացել են խիստ բազմազան էկոհամակարգեր: Հայաստանը սեյսմիկ ակտիվ երկիր է: Երկիրը բաղկացած է տաս վարչական շրջաններից, որոնք կոչվում են մարզեր: Մայրաքաղաք Երևանը առանձին վարչական միավոր է: Երկրի բնակչությունը 2,9 միլիոնից մի փոքր ավել է, որի ավելի քան 60%-ը բնակվում է քաղաքային բնակավայրերում:

Ավելի քան 20 տարի Հայաստանի տնտեսությունը հիմնված էր արդյունաբերական (հիմնականում հանքարդյունաբերական) և գյուղատնտեսական ոլորտների վրա: Վերջին 10 տարիների ընթացքում իրենց մասնաբաժինը ՀՆԱ-ում ավելացրեցին նաև աճող սպասարկման և առևտրի ոլորտները: Հանքարդյունաբերությունը արդյունաբերության և արտահանման մեջ խոշորագույն ավանդ ունեցող ոլորտներից մեկն է:

Հանքարդյունաբերությունը, չնայած հանդիսանում է աճի պոտենցիալ շարժիչ ուժ, նաև վիճելի թեմա է Հայաստանում: Բնակչության մի մասի, մասնավորապես քաղաքացիական հասարակության մոտ, կա զգալի կասկած հանքարդյունաբերության նկատմամբ: Դրան մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ մետաղական հանածոների հանքերի մեծ մասը ստեղծվել են խորհրդային ժամանակաշրջանում՝ բնապահպանական և սոցիալական թույլ չափորոշիչների պայմաններում:

2015-2016թթ. Համաշխարհային բանկը՝ Արդյունահանող ճյուղերի գործառնությունների խորհրդատվության բազմադոնորային հավատարմագրային հիմնադրամի շրջանակներում (ԱՃԳԽ ԲԴՀՀ) աջակցեց «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատման» ձեռնարկմանը: Այն ցույց տվեց, որ չնայած հանքարդյունաբերությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի

տնտեսության համար, առանձին գործառնությունները, ընդհանուր առմամբ, բավարար չափով չեն նպաստում երկրի երկարաժամկետ կայուն զարգացմանը: Սույն ծրագրի նպատակն է՝ մշակել համապարփակ «Հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարություն» և «Գործողությունների պլան»: Ծրագիրն իրականացվելու է ողջ երկրի մասշտաբով:

## **2. ՆՊՍՏԱԿԸ**

Սույն փաստաթուղթը նախատեսված է որպես Հայաստանի Հանրապետության «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն» փաստաթղթի մշակման համար խորհրդատվական ծառայության «Առաջադրանքի պայմանների» (ԱՊ) մի բաժին: Սույն փաստաթուղթը կապահովի, որ Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության բնապահպանական և սոցիալական հարցերը հաշվի առնված լինեն վերջնական ԱՊ-ում, երբ միջոցները մատչելի դառնան ՀՀ կառավարությանը: Հանձնարարության մանրամասները և այլ մասերը կավելացվեն ամբողջական ԱՊ-ում: Սույն հանձնարարության մաս է կազմելու նաև ծրագրի «Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի» (ՇԿՆՊ) իրականացումը:

Հանձնարարության այս բաղադրիչի նպատակն է՝ ուսումնասիրել և գնահատել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության իրականացման հետ առնչվող բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները Հայաստանում, ապահովել, որ ոլորտի բնապահպանական և սոցիալական կառավարմանն առնչվող օրենսդրությունը համապատասխանի միջազգային առաջավոր փորձին, իսկ առաջարկվող բարեփոխումները մանրակրկիտ ուսումնասիրվեն տեղական ենթատեքստի և ռեսուրսների տեսանկյունից՝ ապահովելու քաղաքականության իրագործելիությունը Հայաստանում: Գնահատումը կիրականացվի ազգային նորմերին և ստանդարտներին, ինչպես նաև Համաշխարհային բանի բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան:

## **3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս փաստաթուղթը հանդիսանում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության մշակման ԱՊ մի բաժին (նախնական): Ավելի ընդլայնված ԱՊ-ի արդյունքը լինելու է «Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթուղթը», այդ թվում շահագրգիռ կողմերի ներգրավման իմաստալից գործողությունների ավարտը՝ ըստ ծրագրի ՇԿՆՊ-ի: Խորհրդատուն կմասնակցի հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական զարգացման հետ առնչվող հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերի նույնականացմանը: Այս գործունեությունը պետք է հիմնված լինի Հայաստանում հանդիպող խնդիրների մանրամասն

վերլուծության վրա և օգնի տրամադրել բոլոր շահագրգիռ կողմերին (պետական մարմիններ, հանրային և մասնավոր ոլորտի զարգացման գործընկերներ, հանքարդյունաբերության ոլորտի դերակատարներ, քաղաքացիական հասարակություն, տեղական համայնքներ) մանրամասն տեղեկատվություն և գիտելիքներ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերաբերյալ՝ բիոֆիզիկական միջավայրի և սոցիալ-տնտեսական պայմանների վրա (բնակչության) հանքարդյունաբերության ոլորտի աճի հիմնական հնարավոր հետևանքների գնահատմամբ: Դրանք պետք է դասակարգվեն ըստ կարևորության՝ որպես ուղեցույց օգտագործելով ՀԲ ԲՄՇ-ն:

Խորհրդատուն կպարզի հանքարդյունաբերության ոլորտի տեղը կառավարության շրջակա միջավայրի և համապատասխան սոցիալական քաղաքականության հարցերի շրջանակում: Հանքարդյունաբերության ոլորտի այդ տեղի որոշումը կընդգրկի օգտակար հանաձոնների անցյալ, ներկա կամ պլանավորված արդյունահանումը: Խորհրդատուն պետք է նույնականացնի և տարբերակի՝ մի կողմից ուղղակի և անուղղակի, իսկ մյուս կողմից՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները: Գնահատման ընթացքում կուսումնասիրվեն բոլոր բացասական և դրական ազդեցությունները, որոնք, հավանաբար, կնկատվեն հանքարդյունաբերության քաղաքականության իրականացման արդյունքում:

Ռազմավարական առաջնահերթությունների շարքում խորհրդատուն կներկայացնի համապատասխան առաջարկություններ Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացումը խթանելու համար:

Խորհրդատուի թիմը բաղկացած կլինի տարբեր ոլորտների արհեստավարժ մասնագետներից, որոնք պատասխանատու կլինեն Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի տարբեր հարցերի համար: Նրանցից կպահանջվի աշխատել սերտ համագործակցությամբ և վերլուծել ցանկացած լուծումի սիներգետիկ ազդեցությունը՝ նախքան պատվիրատուի համար որևէ ընդունելի առաջարկի մշակումը: Հանքային ոլորտի քաղաքականության և գործողությունների պլանը մշակելիս հաշվի կառնվեն հանձնարարության բնապահպանական և սոցիալական հարցերը, ինչի համար կիրականացվի՝

- Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության 1-ին դրամաշնորհի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների դիտարկում հանքարդյունաբերության ոլորտում նկատված սոցիալական և բնապահպանական խնդիրների մասով, այդ թվում հանքարդյունաբերության քաղաքականության իրականացումից և ոլորտի կառավարումից բխող ներկայիս բնապահպանական պարտավորությունների և հնարավոր ազդեցությունների

որոշում՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական ազդեցությունների առումով: Այդ գնահատումը կներառի հանքարդյունաբերությունը և կնկարագրի հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի ներկա վիճակը՝ ըստ կարևորության անդրադառնալով հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերին ու ազդեցություններին:

- Քաղաքականությունում ներառվելիք իրատեսական և տնտեսապես արդյունավետ միջոցառումների առաջարկությունների ներկայացում, որոնք ուղղված կլինեն նույնականացված բնապահպանական և սոցիալական ռիսկերի ու ազդեցությունների նվազեցմանը և մեղմացմանը, կամ թույլ կտան խուսափել դրանցից:
- Առանձնացված գոտիներում, ինչպես օրինակ՝ ազգային պարկերում կամ մշակութային ժառանգության վայրերում հանքարդյունաբերության լիցենզիաներ շնորհելու պայմանների լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն, քանի որ Հայաստանը փոքր երկիր է, սակայն հարուստ է պատմական հնություններով, որոնց կարելի է հանդիպել ամենուր:
- Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության վերլուծություն՝ ոլորտի կայուն զարգացման, շրջակա միջավայրի պաշտպանության և հանքարդյունահանման գործունեության սոցիալական ազդեցությունների, ինչպես նաև տեխնիկական անվտանգության խնդիրների տեսանկյունից:
- Ռազմավարական առաջնահերթությունների սահմանում հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի կառավարման բարելավման համար, ինչպես նաև դրան հասնելու համար գործողությունների ու իրավական փոփոխությունների առաջարկության ներկայացում: Այդ առաջարկությունները պետք է ծածկեն բոլոր առանձին փուլերի խնդիրներն ու բացերը՝ մինչ-լիցենզավորման ժամանակաշրջանը, լիցենզիայի շնորհումը, շահագործումը, փակման և հետ-փակման ժամանակաշրջանները:

#### **4. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

Աշխատանքը բաղկացած է լինելու հետևյալ առաջադրանքներից՝ ի թիվս այլ առաջադրանքների, որոնք ՀՀ կառավարությունը կավելացնի կամ կթարմացնի վերջնական/ ամբողջական ԱՊ-ում:

**4.1 Հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի ներկա վիճակի ընդհանուր ակնարկ, հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության և Հայաստանի շրջակա միջավայրի պաշտպանության իրավական, նորմատիվային ու**

**ինստիտուցիոնալ շրջանակի գնահատում՝ 2019թ.** Քաղաքականության մշակման 1-ին ծրագրի ժամանակ Բնապահպանական և առողջապահական գնահատման հիման վրա, սակայն՝ չսահմանափակվելով միայն դրանով:

Խորհրդատուն կգնահատի հանքարդյունաբերության ոլորտի գործողությունները կառավարող նորմատիվային և ինստիտուցիոնալ շրջանակը՝ կառավարության սոցիալ-տնտեսական զարգացման և կայունության քաղաքականության համատեքստում: Խորհրդատուն կառանձնացնի ոլորտի քաղաքականությանը վերաբերող գործողությունները ազգային կամ բազմաոլորտային զարգացման հետ առնչվող գործողություններից, ինչպես նաև կնույնականացնի ոլորտի քաղաքականության դերը բնական պաշարների, ջրի և հողերի օգտագործման հարցում:

Խորհրդատուն կկազմի ինչպես նախկին ուսումնասիրությունների, այնպես էլ իր սեփական հետազոտության և խորհրդակցությունների արդյունքում նույնականացված բացերի ցանկ: Յուրաքանչյուր բացի համար խորհրդատուն կուսումնասիրի այն լավագույն փորձերը, որոնք ամենից շատ են համապատասխանում տեղական պայմաններին և կներկայացնի գործնական լուծումներ ու առաջարկություններ, հաշվի առնելով՝

- 1) անհրաժեշտ և մատչելի ռեսուրսները.
- 2) իրականացման ժամկետները՝ ապահովելու միմյանց հետ փոխկապակցված և միմյանցից կախված գործողությունների/ բարեփոխումների միաժամանակյա իրականացումը:

#### **4.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գործընթացը. հանրային քննարկումներ**

Խորհրդատուն կուսումնասիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հետ առնչվող Հայաստանի օրենսդրությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, մոնիթորինգի և կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև աչքի ընկնող կարողությունների սահմանափակումները կամ մարտահրավերները՝ դրանց առկայության դեպքում: Խորհրդատուն կուսումնասիրի ՇՄԱԳ հաշվետվություններում ներկայացվելիք ելակետային տեղեկություններին ներկայացվող պահանջները, ՇՄԱԳ մեթոդաբանությունը, ինչպես նաև հանրային քննարկումներ իրականացնելու համար սահմանված ընթացակարգերը: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում ընդունվելիք առանցքային սկզբունքներին, ընթացակարգերին և ստանդարտներին: Գնահատման մեջ կավելացվի իրավաբանական ուսումնասիրություն և բարեփոխումների գործողությունների պլան, որը կառաջարկվի որպես քաղաքականության իրագործման մաս:

Խորհրդատուն կուղղորդվի Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական ստանդարտ 1-ով (FSU), ինչպես նաև ոլորտի լավագույն միջազգային փորձով (ՈԼՄՓ - GIIP):

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.3. Խոցելի խմբերը հանքարդյունաբերության ենթատեքստում**

Խորհրդատուն կորոշի այն ենթախմբերը, որոնք կարող են խոցելի համարվել Հայաստանում հանքարդյունաբերական գործողությունների ենթատեքստում, կնկարագրի, թե ինչու նրանք կարող են լինել անբարենպաստ վիճակում մյուսների համեմատ (օրինակ, ապրելու վայր, լեզվական պատնեշներ, ազդեցություն առողջության վրա, չարաշահումներ, քանի որ պատահական աշխատուժ են, վատթար աշխատանքային պայմաններ և այլ): Ներկայիս քաղաքականության ուսումնասիրության հիման վրա խորհրդատուն կառաջարկի հատուկ դրույթ կամ աջակցության ծրագիր, որպեսզի ապահովվի, որ հանքարդյունաբերությունը չազդի նման խմբերի վրա ոչ համամասնական և բացասական կերպով, և նրանք կարողանան օգտվել երկրի՝ իրենց համապատասխան տարածաշրջանում հանքարդյունաբերության ոլորտի զարգացումից: Խոցելի խմբերի որոշումը, նրանց աջակցելու ծրագրերը, այդ խմբերի ու նրանց ներկայացուցչական կազմակերպությունների հետ քննարկումները կհամապատասխանեն Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում նկարագրված գործողություններին:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.4. Տեխնիկական անվտանգություն**

Խորհրդատուն կուսումնասիրի հանքարդյունաբերության ենթակառուցվածքների հետ առնչվող Հայաստանի օրենսդրությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, մոնիթորինգի և կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև աչքի ընկնող կարողությունների սահմանափակումները կամ մարտահրավերները՝ դրանց առկայության դեպքում: Խորհրդատուն կուսումնասիրի շինությունների նախագծման, կառուցման, պահպանման և փակման պահանջները և չափանիշները: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում ընդունվելիք առանցքային սկզբունքներին, ընթացակարգերին և ստանդարտներին: Գնահատման մեջ կավելացվի իրավաբանական

ուսումնասիրություն և բարեփոխումների գործողությունների պլան, որը կառաջարկվի որպես քաղաքականության իրագործման մաս:

Խորհրդատուն կուղղորդվի ՈԼՄՓ-ով:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.5. Քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ հանքարդյունաբերության ոլորտում**

Խորհրդատուն պատասխանատու կլինի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի իրականացման քայլերը «Սկզբնական հաշվետվությունում» ներառելու համար: Խորհրդատուն կպատրաստի համախմբված փաստաթուղթ կամ հավելված, որում նկարագրված կլինեն հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի մշակման գործընթացում անցկացված բոլոր քննարկումների արդյունքները:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.6. Աշխատուժ, առողջությունը և անվտանգությունը հանքարդյունաբերության ոլորտում**

Խորհրդատուն՝ հանքարդյունաբերության ոլորտի և ոլորտում ներգրավված բանվորների տեսակետից, կուսումնասիրի Հայաստանում աշխատողների իրավունքների, աշխատանքի հիգիենայի և անվտանգության հետ առնչվող Հայաստանի օրենսդրությունը, ինստիտուցիոնալ կառուցվածքը, մոնիթորինգի և կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև աչքի ընկնող կարողությունների սահմանափակումները կամ մարտահրավերները՝ դրանց առկայության դեպքում: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում ընդունվելիք առանցքային սկզբունքներին և ստանդարտներին, այդ թվում դրանց ստուգման, հաշվետվողականության և վերահսկողության ստանդարտները: Գնահատման մեջ կընդգրկվի իրավաբանական ուսումնասիրություն և բարեփոխումների գործողությունների պլան, որը կառաջարկվի որպես քաղաքականության իրագործման մաս:

Խորհրդատուն կուղղորդվի Համաշխարհային բանկի ԲՄՍ 2-ով՝ «Աշխատուժ և աշխատանքի պայմաններ, Համաշխարհային բանկի բնապահպանական առողջության և անվտանգության ուղեցույցներ (Ընդհանուր հարցեր)», ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտի այլ ՈԼՄՓ-ներ, օրինակ, որոնք հրապարակվել են

Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից և առնչվում են հանքարդյունաբերության ոլորտում աշխատուժի և աշխատանքային պայմանների հետ:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.7. Հավասարակշռված մեխանիզմներ հողի ձեռքբերման և հանրային շահի միջև**

Խորհրդատուն կուսումնասիրի նախկին դրամաշնորհի շրջանակներում արդեն իրականացված հետազոտությունները և հաշվետվությունները հողի ձեռքբերման, բռնագանձման, հողօգտագործման սահմանափակման, վերաբնակեցման խնդիրների, հանրային շահերի կամ տնտեսական շահերի վերաբերյալ, որքանով դրանք առնչվում են հանքարդյունաբերության ոլորտին, ինչպես նաև կկատարի կոնկրետ խնդիրների անհրաժեշտ հետազոտություններ: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում ընդունվելիք առանցքային սկզբունքներին և ստանդարտներին: Գնահատման մեջ կարծարծվեն նաև ներկայիս ընթացակարգերը և փորձը, ինչպես նաև կիրականացվեն հետազոտություններ՝ հանքարդյունաբերական աշխատանքների համատեքստում հողի ձեռքբերման ժամանակ ի հայտ բերած դժվարություններին անդրադառնալու համար: Գնահատման այս մասում կավելացվի իրավաբանական ուսումնասիրություն և բարեփոխումների գործողությունների պլան, որը կառաջարկվի որպես քաղաքականության իրագործման մաս:

Խորհրդատուն կուղղորդվի Համաշխարհային բանկի ԲՄՍ 5-ով՝ «Հողի ձեռքբերում, հողօգտագործման սահմանափակումներ և ոչ կամավոր վերաբնակեցում»:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.8. Ֆինանսական ապահովագրություն և այլ մեխանիզմներ**

Խորհրդատուն կուսումնասիրի ֆինանսական մեխանիզմները, որոնց նպատակն է՝ ապահովել հանքարդյունաբերության ոլորտին առնչվող բացասական ազդեցությունների կանխարգելումը կամ ամբողջական փոխհատուցումը, ինչպիսիք են վերականգման ֆոնդը, մոնիթորինգի վարձը կամ հանքի փակման երաշխիքները, աշխատողի առողջության և անվտանգության ապահովագրությունը և/կամ այլ: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում ընդունվելիք առանցքային սկզբունքներին և ստանդարտներին: Գնահատման այս մասում կավելացվի նաև իրավական ուսումնասիրության և բարեփոխումների



գործողությունների պլան, որը առաջարկվում է որպես քաղաքականության իրագործման մաս:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*

#### **4.9. Թափանցիկություն, սոցիալական ենթահաշվետվություն և օգուտների համատեղ օգտագործում**

Խորհրդատուն կուսումնասիրի հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և ենթահաշվետվության հարցերը, ներառյալ, ի թիվս այլոց՝ հանքարդյունաբերական աշխատանքների թույլտվությունների հատկացման թափանցիկությունը, հանրային քննարկումները, հանրային ծախսերը և հանքարդյունաբերության ոլորտից ստացված հասույթները, ինչպես նաև օգուտների համատեղ օգտագործումը հատկապես այն դեպքում, երբ դա վերաբերում է հանքարդյունաբերության աշխատանքներից ամենից շատ տուժած քաղաքներին և համայնքներին: Կուսումնասիրվի նաև հանքային ոլորտի գործունեության կայունության մասին հաշվետվողականության փորձը: Արդյունքում, խորհրդատուն կպատրաստի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության (ենթա)բաժին, որը նվիրված կլինի ոլորտում սոցիալական ենթահաշվետվության և օգուտների համատեղ օգտագործման վերաբերյալ ընդունվելիք առանցքային սկզբունքներին և ստանդարտներին: Գնահատման այս մասում կավելացվի իրավաբանական ուսումնասիրություն և բարեփոխումների գործողությունների պլան, որը կառաջարկվի որպես քաղաքականության իրագործման մաս և որի ընդհանուր նպատակը կլինի՝ ապահովել ավել լայն թափանցիկություն և, միևնույն ժամանակ, հաղթահարել ոլորտի դեմ միակողմանի բացասական տեղեկատվական հոսքը: Այս բաժինը կգրվի շահագրգիռ կողմերի հետ քննարկումների համապատասխան հարցերի հետ կապ հաստատելու համար, ինչը հանդիսանում է օգուտների համատեղ օգտագործման հաջող փորձի բաղկացուցիչ մաս:

*(Ուշադրության կենտրոնում գտնվող ոլորտները մանրամասն կնկարագրվեն վերջնական ԱՊ-ում)*